

# ՄԱՅՐ ԴԻԼԱՆ

ՄԽԻԹԱՐԵԱՆՑ ՎԵՆԵՏԿՈՅ. - Ի Ս. ՂԱԶԱՐ

(Եար. տես Բայզ. 1921 էջ 396)

Դ.


ԵթեինեԱլ, նամակը գրուած է Հ. Պօրու ծառայ կրօնաւոր քահանայէ. սա Հ. Պօրու Միմոնեանն է, Միխթար Արքայի առաջին աշակերտներէն, այս ժամանակներս Հ. Գէորգ Այնթապցիի հետ առարկելութեան մէջ էր արևելք<sup>1</sup>: Այսն երկու Հայորեն են որ յետոյ ի Պոլիս 450 դահեկանի զնելով կ'ազատեն Մեթոնի մեր երկու հայ վարդապետները զէ: Ղաղար և զէ: Յակոր, որ Օսմանցւոց ու վէնետիկեան Հասարակապետութեան պատերազմի պահուն՝ Մեթոն ալ ոտնակոխ ըլլալով՝ զերի տարուեր էին և հայ վաճառականներ զանոնց զնած էին:

Հ. Պօրու ներկայ նամակաւ նաև կը հաղորդէ Արքահօր ի Մեթոն՝ Պոլսոյ և գաւառներու մէջ տեղի ունեցած դէպքերն ու անցողարձ:

... Ոււահ պէկն որ էր ի կոստանդիոնիպօլիս ի բանտն, յետ բազմաց չարչարանց, զորս եռուն նմա, որպէս զի զոր ինչ ունիցի առնուցուն ի նմանէ, և յետ առնոյ զտասն և եօթն հազար քամ զրամս ի յօցուստոփ ամսոյ 17ին սպանին և ընդ նմա հինգ արք ևս, որոց ոմանք լեալք են որդիի իւր. և ոմանք խորհրդականք իւր և զիիս վեցեցունս ևս եղին առաջի դրան թագաւորին: Տակաւին կին նորա և զտուեթին ի ձեռն պատանի պաշոյն են. և ոչ յայտնի զինչ արարեկոց են և նոցա:... Միանգամ այսպէս լորու ի թէ ի յանատօիք բազում տաճկունք ժողովեցեալք իցեն. և կարգացմամբ զիրաւուն՛ եկեալք ի ստամպօլ զիազաւորն և զայլս ոմանս փոխելոցք իցեն. բայց սուս էել: Ի յուլիսի ամսոյն ի թօֆատ կրակ անկեալ է, և այրեալ է զերկուտասան հազար կրասկ, զեօթն բազանիկ, և զշորս իսան: Երկու անզամ կրակ անկաւ ի ստամպօլ. մինն ի սարայն թագաւորին, նորում այրեցան երկու և երեք հացի բուռաք. և միրուն ի սուլթան պայազըն, նորում քան և երեսուն կրպակ այրեցան մերձ այնը տեղի, ուր վաճառին հաւթ: Ակսեալ է թագաւորն զշորս և զինչն մաւունայ շինել տալ. և զայլս բազումս պատրաստութիւնս առնէ օրսատօք. բայց առ որ կողմ զնալն ոչ է յայտնի: Զդալաղա սարայն, որ վաղուց հնուտ աւերեցեալ էր, այս զէիիս շինել ետ այնու վախճանաւ, որոյ վախճանի նախապէս շինեցալ է և յետոյ խանզարեալ է, վախճան՝ որոյ վասն շինեցեալ է, այս լեալ իցէ, զի սահմանեալ ժամանակօթ թւով այսքան և այնքան ի յուումելի զորդիս քրիստոնէից ժողովեալ, բերեալ և գրեալ իցեն հանդերձ տաճկացուցմամբք ի կալազա սարայն, և անդէն ուսուցեալ և կրթեալ զնոսա ի պաշտօն արքունական կարգեալ իցեն: Նմանապէս և այժմ առնելոցն են: ի ժամանակի թագաւորին այսորիկ ամենայն էննաւ ասնն, թէ ոչ զօն առք և տուրք: ի յամիս այսորիկ ոչ եղնէն մինչեւ ցայս վայր գրեթէ մահք. այս սինքն եռուուրծանիք:

Ի թիին Հայոց ունկ [1714] և ի սեպտեմբերի 2  
գրեցա թուութս ի Հայր Պօրու ծառայ  
կրօնաւոր քահանաւէ

1. Վարժ Մխ. Արքայի Հ. Յ. Թորոսեան էջ 265.



Նամակիս ներքեւ բացի այս թուականէն կը գտնուի քիչ մը հեռուն՝ նաև ուրիշ մը, այսպէս « իսկ միսն դրեցա ի քիչ Հայոց ողջ և ի յօդոսոսի Յօհն »։ Մենք ուրիշ զիր չտեսանց. թերևս ատիկայ ակնարկութիւն մ' է նոյն նամակին՝ տարրեր անձի ձեռքով դրկած նախընթաց օրինակի մը՝ ինչպէս նոյն ժամանակի սովորութիւն էր, ապահով ըլլալու համար։

## Ե.

Այս նամակը ոչ մի նշան չունի թէ ո՞ր քաղաքէն դրկուած է առ Միհիթար։

Առ Վերապատուելի Արքայի տև Միհիթար աստուածարան վարդապետի

Գիտացէտ տէրութիւն քո վերոյ գրեցելոյդ իմոյ քանզի բազում ժամանակ է որ վարդապետէն զիր առած չեմ. քանզի զրեր էր ի մատոփդ քաղաքէն, որ է ըսպանեայու, թէ կուգեմ որ յետ դառնամ, զէրբէ ըսպանեայու անուն է Թացեր, Խարճէրննիս չի հաներ, ուր տեղ կերթանք ամեններան կուլան, թէ ազքատացանք վասն երկար պատերազմին.... Վերապատուելի իմ, գիտենաս որ ունիմ խնդրուած ի քիչ որ լուեալ եմ, թէ ձեր հրամանքնիդ ջանկըցոց խորհրդատեսորդ կասէք պտրո. խոհս լաւ կանէք, զէրբէ մեր խորհրդատեսորդ ճաշոց գիրքն է, ամա չեմք կարեր ի գործածել, և ոչ զտանի ասս զնալոց գիրքն և ոչ կարեմք տանել եկեղեցին՝ վասն ժանրութեանն։ Բայց մեր ունիմը խորհրդատեսորդ որ տէր թայթէոսն է զրեր, և իւր խորհրդայտեարին օրինակն է, և ոչ գոտանէ զամնն աւուր պատշաճի, և ես ասեմ պատարագ լաթինացոց եկեղեցին և կու պատահի տարակուսի և խոճմուանաց բան։ Բայց լուեալ եմ թէ ունիմ պասմա խորհրդատեսորդ հայ գրով, լաթին օրինակով, խնդրեմ որ չնորհ անես....

Թվին Փրկչին 1717

Մայիսի ի:

Ընկաւշիք յօհաննէս քահանայէ, պատրաստական  
ծառայ. մամ ազօթից ձերոց

## Զ.

Անկեղծութեան ցոլացում մ'է հետազայ զիրը՝ ստորագրող պատանւոյն կողմէ առ իւր նախկին հայրը Միհիթար։ Դիտելի է միանգամայն սա կէտը, որ մինչ կարեկցութիւն կը շարժէ ան, դուրս կը ճառազայթէ միանգամայն եր. Հօր զեղեցիկ սկզբունքները և իր փոքրիկ Միհանութեան ներքին յարցն ու բարձրութիւնը. հոգ չէ որ բաշարթուն ու փորձ Հիմադիրը այդ վիճակին անյարմար դատելով ստիպուեր է ետ առաջել զպատանին, անոր իսկ բարոյն համար։

Ամենապատի տեսան սրբոյ հօրն իմոյ ապահով խոնարհական ողջոյն մատուցանեմ

Եւ յետ ողջունի, իմ սիրելի հայր իմ, եթէ հարցանես զիմ զորպիսութիւնը գոհութիւն քրիստոսի ողջ և առողջ եկանք զասանիք ի քաղաքն վեննա, տասն և եօթն օրն, յետ հասանելուն քիչ մը տկարութիւն եկաւ ինձ. ՅՅ օր ի սպիրալն պառկեցա, գոհութիւն քրիստոսի հոմի առողջանայու կողմն դացաւ. Դարձեաւ, հայր իմ եթէ հարցանես զինչ տկարութիւն էր տէյի, երանի է աւուրն այս որ ձեր մէջն մոտայ ուրախութեամբ խոնդութեամբ Դարձեաւ, հայր իմ, գուս որ հանէցիք զիս մահս ձեռքս տվիք այսպէս հանէցիք դուս. ախով վախով վէրծ չզա հալեցա հրալ դացաւ, քէշէ այդ չափ ալ մէջերնիդ մտած չի պիտէր. եթէ այսպէս Թամա՛, 2 ամիս կամ 3 ամիս չեմ քըշէր կը մեռանիմ։ Դարձեաւ, հայր իմ, կաղաչն ձեզ որ ազօթէք զինձ համար, որ Աստուած իմ մտաց բառնա Միհանութիւն եօքսա քանի միտքս է ախախ ընելով կը մեռանիմ։

Դարձեալ, հայր իմ, եթէ հարցանես տէր Պետրոսն, զահիր ինձ ըսպասելու չէ, եւա զնաց, հիմի մասի մինակ հրանդութեամբ ելած, տէրման չունիմ. փէն կրյսիմ. մնոելի երես քուն [գոյն] կա իմց շիքա հիմի մինակ ճանապարհ ելա, օգոստոսի 20ին, տարալով բէրալով պիտի երթամ կամաց կամաց ճանապարհ ալ չէմ զիտէր, չի մեռանիմ լաւ է, պարէ մէկ մարդ մալ ընկեր չունիմ քովս որ զիս մինիթառէ, անմինթար եմ մնացէր. միայն Այ եմ ապաւներ. իբրև հայր ի մայր ձեզ ճանաչեցի, ձեզմով կը մինիթարէյի. դուք ալ ելաք ձեռացս, ախախ ընելով պիտի մնոնիմ, կաղաքիմ ձեզ աղօթեք վասն ինձ ամէն:

Դարձեալ իմ սիրելի հայր իմ, եթէ հարցանես պատերազմի կողմն, գոհութիւն քրիստոնութիւն տասն և ինին խապար եկաւ թէ տաճկին ճակատն աւերեցինք, մնեց ուրիշութիւն եղաւ քաղաքին մէջ: Յոյս ունինք թէ յետ երից աւուրց պելիրդատ ալ կառնեն Ամէն...:

Ես տիրացու Գրիգորս ողջոյնս մատուցանեմ և առ ամենեսն միաբանից ձերոց  
Ամի Տեառն 1717. օգոստոսի 20 ի Վենեա:

## Է.

Ահա՝ Պաշտօնագիր մը, զոր կ'ուղղէ Խաչատուր Էրզրումեցի լուսամիտ և ասուածարան վարդապետը, իբր Առաքելական Քարոզիչ, Ալիկոռնայի Հայ ժողովրդին, անոնց հիւրասիրութեան ու մասնաւոր ինամըջին յանձնարարելով իր մեծանուն բարեկամին Մինիթարայ աշակերտ Հ. Մանուէլը (Խուարաբեան կ. Պոլսեցի), որ բժշկին խորհրդով և հրամանաւ մեծաւորին հոն կ'առացուի՝ վերագտնելու համար իր առողջութիւնը:

Ցիսուսի Գրիստոսի Նրանց ի Տէր Խաչատուր Վարդապետէն հասցէ Ցիսուսաւանդ ողջոյն, և բազմազն օրհնութիւն ի վերայ մերազնեաց ի յԱլիկոռնա քաղաքի եղելոց Գրիստոսասէր հաւատացելոց Ծանուցումն լիցի սիրելեացդ իմոց ի Տէր, զի Գրիշին մեր ասէ ի սրբում Աւետարանի. Ցայսմ զիտացեն ամենեթեան եթէ իմ աշակերտ էք, եթէ սիրիցէք զմինեանս: Ապա ուրեմն որք սիրեն զեղրայր վասն սիրոյն Գրիստոսի, նոքա աշակերտ են Գրիստոսի և որդիի արքայութեան: Սիրելն է առնել զգործս սիրոյ: Մին ի գործոց սիրոյ է, ժողովի զօսարս և ընդունիլ զիւրս: Ծանուցումն լիցի բարեպաշտափութեան ձերում, զի այս թղթաբեր Տէր Մանուէլս է մինն ի պատուագունից Արդարաց Մինիթարայ Աստուածաբան Վարդապետի Սերաստայոյ, որ վասն իւրոյ մեծի գերազանցութեան, է պարձակը ազգիս մերիս: Այս Տէր Հմանուէլ Արենայս անկեալ է ի խօթութիւն, առ որոյ փարատումն հարկաւոր համարեցա փոփոխումն օդոյ ի բժշկաց: Ուստի մեծաւոր սորին յիշեցեալ Մինիթար Աստուածաբան բարեպաշտին Վարդապետն ի խորհրդոց բժշկաց առ փոփոխումն օդոյ, հարկադրեցա զիշեցեալ Տէր Մանուէլ Արենայն առափել այդր առ ստացումն ապաքինութեան: Ալերսանօթ հայցեմ ի բարեպաշտութենէ ձերմէ, զի յիշեցեալ Տէր Մանուէլի Արենայի, յայնմիկ, յորում կարօտանացէ օգնականութեան ձերում, շարժեցեալք ի սիրոյ յօժարաբար ի թիկունս հասանիցիք, որպէս վայելէ բարեպաշտութեան ձերում, զմիծամծ վարձս ի Գրիստոսէ Աստուածութեան մերմէ ընդունելոցք: Արդ յանձն արարեալ զնեզ Ամունծոյ և շնորհի նորին, և զիս աստուածնկալ և առաջածանանոյ աղօթից ձերոց, մնամ:

Աստուածանմոյ բարեպաշտափութեան ձերոյ.

ի Վենեաիկ  
1717 սեպտեմբերի 22:

կնիք  
(Վարումակելի)

Վարդապետական յամենայնի  
Խաչատուր Վարդապետ Էրզրումեցի  
Առաքելական Միստրոնար առ Հայս

Հ. Պ. Տաթև